Գլենդելի Հանրային Հրաման No. 2020-09

Գլենդել Քաղաքի Արտակարգ Իրավիճակների Լիազորության Ներքո

Թողարկման Ամսաթիվը. Մայիսի 15, 2020թ.

Քաղաքապետարանի Ձեռնարկած Միջոցները COVID-19-ի Վերաբերյալ

Մասամբ Չեղարկում GPO No. 2020-04

Քանի որ 2020թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը՝ համաձայն Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, տեղական արտակարգ իրավիճակ հայտարարեց: Սա անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով Կորոնավիրուս հիվանդություն 2019-ի (COVID-19) վերաբերյալ աճող մտահոգությունը: Այն նովել (նոր) Կորոնավիրուսից առաջացած սուր շնչառական խիստ հիվանդություն է: Վիրուսի ախտանիշները ներառում են ջերմություն, հազ, շունչ կտրվել, և վարակված անձինք ցուցաբերել են տարբեր տեսակի արդյունքներ՝ մեղմ հիվանդությունից մինչև խիստ հիվանդություն և մահ: Հաստատված վարակակիրների թիվը շարունակում է կարճ ժամանակահատվածում կտրուկ աճել: Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնը մեզ տեղեկացնում է, որ COVID-19-ը դյուրորեն փոխանցվում է մեկ անձից մյուսին, և ուղեցույց է թողարկել, որը հանրությանը խորհուրդ է տալիս որդեգրել սոցիալական հեռավորությունը ներառող քաղաքականություն և առօրյա՝ երբ այն հնարավոր է: Ի հավելումն, 2020թ. մարտի 16-ին քաղաքային խորհուրդը հրամայեց, որպեսզի որոշ հանրային հաստատություններ փակվեն կամ դրանց հասանելիությունը սահմանափակվի,

Քանի որ Գլենդելի քաղաքապետարանը վերստին կրկնապատկել է իր ջանքերը՝ ուղղված ձեռքերի հիգիենայի, շնչառական կանոնների և սոցիալական հեռավորության պահպանմանը: Չափազանց կարևոր է, որ մենք՝ որպես քաղաք, անենք հնարավոր ամեն ինչ՝ դանդաղեցնելու հիվանդության տարածման տեմպերը համայնքներում և խուսափելու մեր բժշկական համակարգի անհարկի ծանրաբեռնվածությունից: Մեր ջանքերին նպաստելու նպատակով, Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի համաձայն՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը լիազորված է կազմել և արձակել կանոններ և կանոնակարգեր այն հարցերի վերաբերյալ, որոնք կապված են նման արտակարգ իրավիճակների հետևանքով կյանքի և սեփականության պաշտպանությանը, հրաման է արձակվել, որպեսզի Գլենդել քաղաքի որոշ հաստատություններում, որտեղ մեծ քանակով մարդիկ են հավաքվում և իրար մոտ տարածությունում գտնվում, ժամանակավոր մի շարք սահմանափակումներ կիրառվեն,

Քանի որ 2020թ. մարտի 23-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը որդեգրեց Գլենդելի Հանրային հրաման 2020-04-ը, որով փակվեցին քաղաքի տնօրինած բոլոր ճեմուղիները, սպորտային և խաղահրապարակները, խաղադաշտերը և այգիների, հանգստի վայրերի սարքերը,

Քանի որ 2020թ. մարտի 24-ին այդ հրամանը հաստատվեց Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից,

Քանի որ 2020թ. մայիսի 9-ին, հետևողական լինելով Լոս Անջելեսի վարչաշրջանի կողմից <<Ավելի ապահով՝ տանը>> հրամանի փոփոխություններին, Գլենդելի հանրային հրաման 2020-04-ը մասամբ չեղարկվել է, բացվել են ճեմուղիներն ու դրանց մուտքերը: Այս օրենքը քաղաքային խորհրդի կողմից հաստատվել է 2020թ. մայիսի 12-ին,

Այժմ դրա համար՝ համաձայն Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի կողմից վերապահված իրավասությունների, Արտաքին իրավիճակների ծառայության տնօրենը թողարկում է հետևյալ հրամանը, որը ուժի մեջ կլինի 2020թ. մայիսի 15-ի երեկոյան ժամը 11:59-ից սկսած՝ մինչև տեղական արտակարգ իրավիճակի ավարտը.

Բաժին 1. Հետևողական լինելով Լոս Անջելեսի վարչաշրջանի կողմից <<Ավելի ապահով՝ տանը>> հրամանի փոփոխություններին, Գլենդելի հանրային հրաման 2020-04-ը մասամբ չեղարկվել է, և թենիսի դաշտերը, փիքլբոլի դաշտերը, համայնքային այգիները և գետի ճեմուղու ձիասպորտի տարածքը այժմ հանրության համար բաց են: Այս տարածքներում գտնվող անձինք պետք է պահպանեն պահանջված ֆիզիկական հեռավորությունը, դեմքը ծածկող սարքեր կրեն (ինչպես պահանջվում է՝ ըստ Քաղաքային բանաձևեր 20-41-ի և 20-55-ի), և պետք է հետևեն անվտանգության այլ կանոններին՝ ինչպես պահանջվում է:

Բաժին 2. Վերոհիշյալ Հանրային հրամանի ցանկացած խախտում կարող է ուղղորդվել Քաղաքային փաստաբանի գրասենյակ՝ ըստ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.20 գլխի մեղադրման, որտեղ նշվում է, որ տույժը չպետք է գերազանցի $1,000-ը և ներառում է ազատազրկում՝ վեց ամսից ոչ ավել ժամանակով: Յուրաքանչյուր ոստիկան պետք է այս հրամանը կիրառի ըստ իր հայեցողության և միշտ մտապահի հրամանի մտադրությունը: Խախտումները կարող են նաև կիրառվել ըստ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24 գլխի, որը այլ կիրառման մեխանիզմների հետ համատեղ կկիրառի առաջին խախտման համար $400 տույժ, երկրորդ խախտման համար՝ $1000 և երրորդ խախտման համար՝ $2,000:

15th Day of May, 2020

Time: 01:58 p.m.

By: _____

Yasmin K. Beers
Director of Emergency Services

Approved as to Form:
MICHAEL J. GARCIA, CITY ATTORNEY

By: Michael J. Garcia

Title: City Attorney

Date: May 15, 2020